ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ «ՀՀ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«ՀՀ հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի[1] վերաբերյալ դիրքորոշումը հանգում է հետևյալին.

Նախագծի համաձայն՝ ի թիվս այլ կարգավորումների՝ նախատեսվում է լրացնել գործող հարկային օրենսդրությամբ շրջանառության հարկ վճարող հանդիսացողներից բացառություն կազմողների ցանկը: Մասնավորապես՝ Նախագծի 33-րդ հոդվածի համաձայն՝ ՀՀ հարկային օրենսգրքի[2] 254-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետում նախատեսվում է «աուդիտորական կազմակերպությունները» բառերից հետո լրացնել **«, հաշվապահական, խորհրդատվական, իրավաբանական ծառայություններ մատուցողները» բառերը, որի արդյունքում նշված ծառայություններ մատուցողները ևս ներառվում են** շրջանառության հարկ վճարողներ չհամարվողների շարքում:

Փաստորեն, նշյալ օրենսդրական փոփոխության արդյունքում ստացվում է, որ հաշվապահական, խորհրդատվական, իրավաբանական ծառայություններ մատուցողները, գործող կարգավորումների համաձայն, հարկման հատուկ համակարգից այսուհետ անցնում են կատարում ընդհանուր համակարգի շրջանակներում հարկման:

Գործող կարգավորումներ համաձայն՝ իրավաբանական ծառայություններ մատուցողները հիմնականում գործում են շրջանառության հարկի դաշտում, որն Օրենսգրքի 256-րդ հոդվածով սահմանված՝ (ապրանքների մատակարարում, աշխատանքների կատարումը և (կամ) ծառայությունների մատուցում, ինչպես նաև այն գործարքները, որոնց դիմաց ստացվում են վարձակալական կամ օգտագործման վճար, տոկոս և (կամ) ռոյալթի) հարկման օբյեկտ համարվող գործունեության տեսակների իրականացման համար Օրենսգրքով սահմանված կարգով, չափով և ժամկետներում պետական բյուջե վճարվող՝ ԱԱՀ-ին և (կամ) շահութահարկին փոխարինող պետական հարկ է:

[1] Այսուհետ՝ Նախագիծ
[2] Այսուհետ՝ Օրենսգիրք

Նախագծով ամրագրված փոփոխությունների արդյունքում, օրինակ, իրավաբանական ծառայություններ մատուցողները անցնում են հարկման ավելացված արժեքի հարկի դրույքաչափերով՝ համաձայն Օրենսգրքի 60-րդ և 63-րդ հոդվածների, ինչպես նաև՝ Օրենսգրքի 125-րդ հոդվածով նախատեսված շահութահարկի դրույքաչափով: Այսպես, Օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված՝ ԱԱՀ-ով հարկման օբյեկտ համարվող գործարքների ու գործառնությունների հարկման բազայի նկատմամբ ԱԱՀ-ն հաշվարկվում է 20 տոկոս դրույքաչափով, ինչպես նաև Օրենսգրքի 125-րդ հոդվածով ամրագրված շահութահարկի դրույքաչափով, որը Նախագծի 24-րդ հոդվածով սահմանված է 18 տոկոս:

Արդյունքում, նախատեսվում է ծառայությունների մատուցման գների բարձրացում, ինչը խոչընդոտ կհանդիսանա ոչ միայն գործարար միջավայրի բարելավման և ձեռնարկատիրության խթանման, այլ՝ նախևառաջ ծառայություններ ստացողների հիմնական իրավունքների իրացման համար: Խոսքը հատկապես իրավաբանական ծառայությունների մասին է, ինչի պարագայում վտանգվում է ՀՀ Սահմանադրության 2-րդ գլխով և մի շարք միջազգային հիմնարար փաստաթղթերով ամրագրված՝ արդար դատաքննության և իրավաբանական օգնություն ստանալու հիմնական իրավունքները:

Մարդու իրավունքների պաշտպանի համար առանցքային նշանակություն ունի փաստաբանի անխոչընդոտ աշխատանքն ու իրավաբանական ծառայության մատչելիությունը յուրաքանչյուրի համար , քանի որ այն այլ հիմնական իրավունքների իրացման և դրանց խախտումների դեպքում այդ իրավունքների վերականգնման հիմնաքարերից է: Փաստաբանի գործունեությունը, բնույթով լինելով իրավապաշտպան գործունեություն, հանրային նշանակություն ունի և չի կարող դիտարկվել բացառապես ձեռնարկատիրության տեսանկյունից: Ուստի, նախևառաջ, անհրաժեշտ է քայլեր ձեռնարկել իրավաբանի ծառայությունների մատչելիության ապահովման համար:

Այս իրավունքն առաջնային երաշխիք է՝ ուղղված իրավաբանական օգնություն ստացող անձի իրավունքների, ազատությունների և շահերի իրականացմանն ու պաշտպանությանը՝ ապահովելով ՀՀ Սահմանադրությամբ և միջազգային հիմնարար փաստաթղթերով երաշխավորված՝ անձի իրավաբանական օգնություն ստանալու իրավունքը:

Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի արդար դատաքննության իրավունքն ամրագրող 6-րդ հոդվածը ներառում է նաև իրավաբանական օգնություն ստանալու իրավունքը, որի կիրարկման արդյունքում Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նախադեպային իրավունքով սահմանել է մի շարք կարգավորումներ և երաշխիքներ՝ նշված իրավունքի ապահովման նպատակով:

Բեուզեն ընդդեմ Բելգիայի գործով Եվրոպական դատարանը, հաշվի առնելով Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի դիրքորոշումները, դիրքորոշում է հայտնել, որ իրավաբանական օգնություն ստանալու իրավունքի (փաստաբանի հասանելիության իրավունքի) նպատակն է արդարության իրականացման թերացման կանխարգելումը և, առաջին հերթին, Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի նպատակների իրականացումը, հատկապես, քննչական մարմինների ու դատախազության և մեղադրյալի միջև զենքերի հավասարության ապահովումը: Դատարանը նշել է, որ իրավաբանական օգնություն ստանալու իրավունքը (փաստաբանի հասանելիության իրավունքը) հակակշռում է կասկածյալի խոցելիությունն ազատությունից զրկման վայրերում, ոստիկանության կողմից կասկածյալների նկատմամբ հարկադրանքի և վատ վերաբերմունքի հիմնարար երաշխիք է, ինչպես նաև ապահովում է մեղադրյալի՝ իր դեմ ցուցմունք տալու պարտականությունից ազատվելու իրավունքը[3]:

Ըստ Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի թիվ 2121(2018) հանձնարարականի՝ ԵԽԽՎ-ն համակարծիք է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի տեսակետի հետ, որ փաստաբանները, պայմանավորված իրենց հատուկ դերով, արդարադատության իրականացման ընթացքում ունեն կենտրոնական նշանակություն՝ որպես հանրության և դատարանների միջև գլխավոր դերակատարներ և միջնորդներ:

Ուստի այս իրավունքի արդյունավետ կիրարկման համար սահմանված են մի շարք երաշխիքներ: Այսպես, ի թիվս այլնի, իրավաբանական օգնությունից օգտվելը պետք է յուրաքանչյուրի համար լինի մատչելի և հասանելի: Ընդ որում, Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի թիվ R(2000)21 հանձնարարականն անդամ երկրներին նույնպես

[3] Տե՛ս, Բեուզեն ընդդեմ Բելգիայի (Beuze v. Belgium) գործով Եվրոպական դատարանի 2018 թվականի նոյեմբերի 9-ի վճիռը, գանգատ թիվ 71409/10, կետ 125-130

առաջարկում է բացառել «տնտեսապես վատ վիճակում գտնվող անձանց» դատարանի մատչելիության իրավունքի հնարավոր արգելափակումը: Անդամ պետությունների կառավարությունները պետք է ապահովեն, որ արդյունավետ իրավաբանական ծառայությունները հասանելի լինեն տնտեսապես վատ վիճակում գտնվող անձանց:

Միևնույն ժամանակ, ՄԱԿ-ի՝ Հանցագործության կանխարգելման և հանցագործների նկատմամբ վերաբերմունքի մասին ութերորդ կոնգրեսի ընթացքում ընդունված՝ «Փաստաբանների դերի վերաբերյալ հիմնարար սկզբունքների» համաձայն՝ կառավարություններն իրենց տարածքում և օրենսդրության սահմաններում, առանց որևէ տարբերակման, պետք է ապահովեն բոլոր անձանց համար արդյունավետ և հավասար իրավաբանական օգնություն ստանալու իրավունքի գործուն ընթացակարգեր և բավարար մեխանիզմներ:

Այսինքն՝ միջազգային փաստաթղթերում ևս ամրագրված է այն սկզբունքը, որ ֆինանսական վիճակը չպետք է խոչընդոտ հանդիսանա, ըստ անհրաժեշտության, իրավաբանական ծառայությունից օգտվելու համար:

Ավելին, ստեղծված իրավիճակն անհրաժեշտ է գնահատել նաև Հանրային պաշտպանի գրասենյակի կողմից մատուցվող ծառայությունների տեսանկյունից, որից կարող են օգտվել բացառապես օրենքով ամրագրված չափանիշներին բավարարող անձինք: Նման փոփոխությունների պարագայում իրավաբանական օգնության իրավունքի սահմանափակում է առաջանում այն անձանց համար, ովքեր չեն կարող օգտվել Հանրային պաշտպանի գրասենյակի ծառայություններից, քանի որ դրանց ստացման համար «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածը սահմանում է անվճար իրավաբանական օգնությունը տրամադրման անձանց հստակ շրջանակ: Այլ անձանց համար փաստաբանի ծառայությունների օգտվելը ծառայության վճարների բարձրացման պարագայում դառնում է անհնար:

Ուստի, իրավաբանական ծառայության դիմաց գանձվող վճարի ավելացումը մի շարք դեպքերում կհանգեցնի Սահմանադրությամբ և միջազգային փաստաթղթերով ամրագրված հիմնական իրավունքների սահմանափակման՝ հատկապես տնտեսապես խոցելի վիճակում գտնվող անձանց համար:

Ավելին, անհրաժեշտ է հատուկ ընդգծել, որ հարկային օրենսդրության նման փոփոխությունները կատարվում են առանց որևէ հիմնավորման և նախագծին զուգահեռ չեն ներկայացվում դրանում ամրագրված կարգավորումների արդյունքում վրա հասնող հնարավոր ռիսկերը: Այստեղից տպավորություն է ստեղծվում, որ իրականում նախագծի մշակումից առաջ չի իրականացվել ոլորտի համակարգային և բավարար ուսումնասիրություն:

Խնդիր է նաև այն, որ նույն հարկման ռեժիմի պայմաններում անհատ ձեռնարկատեր փաստաբանների ու խոշոր իրավաբանական կազմակերպությունների միջև կխախտվի առողջ մրցակցությունը, ինչի արդյունքում կտուժի անհատ ձեռնարկատերը, քանի որ վերջիններս օրենսդրական նման փոփոխությունների դեպքում խոշոր իրավաբանական ծառայություններ մատուցող կազմակերպության հետ հարկվելու են հավասար պայմաններում:

Բացի նշյալ խնդիրներից, Նախագիծը մշակող մարմնի կողմից այն չի շրջանառվել իրավասու մարմինների շրջանակում, չի ներկայացվել ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին կարծիքի, ինչպես նաև չեն կազմակերպվել հանրային քննարկումներ Նախագծի ընդունման, նպատակահարմարության և հիմնավորման պարզաբանման նպատակով: Նախագծի նպատակների և հիմնավորումների վերաբերյալ քննարկումները կարևոր են՝ հատկապես հաշվի առնելով նաև այն, որ Նախագիծը հանրության և մասնավորապես՝ այն սուբյեկտների շրջանում, ում վրա տարածվում են Նախագծով ամրագրված դրույթները, մեծ քննարկումների և հակադրությունների առիթ է ստեղծել:

Ելնելով վերոգրյալից և հաշվի առնելով Նախագծի ընդունման արդյունքում՝ արդար դատաքննության և իրավաբանական օգնություն ստանալու մարդու իրավունքի սահմանափակման ռիսկը՝ անհրաժեշտ է անփոփոխ թողնել Օրենսգրքի գործող կարգավորումները:

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմ